

Ճ Ո Ր Ո Ւ Յ Ի Ա Ի Ա Ջ Ա Ն Ը

առ = առուակ: — լ = լեռ: — լը = լեռնաշղթայ:
(Շարունակություն)

Է.

Լեզվանայի հովիտը եւ Խալխալ:

Պալխար վտակի հովտին կպած է ճորոխի այն ընդարձակ, կենդրոնական հովիտը, որն անբաժանելի կերպով միացած է Պասլու-Բալխարին եւ կոչում է Լիվանա: Ճորոխը այս հովտում ընդունում է ձախից Կալիկի, Ախեթի, Օկերի, Չորի, Բիտի, Ուխշումի, Խորդայի առ-նեքը, որոնք ոռոգում են համանուն գեղերը, նրանց մացրաները, ախոռները, եայլաները, աւերակ բերդերն ու ամրոցները: Ապա ճորոխին միանում է Փետուցուր վտակը, որն սկսում է Գաղակաթիլ խրամախից, սկզբում ուղղում է արեւելք, ապա թեքում է հիսիս-արեւելք եւ նորից արեւելք, ոռոգում է Խամխալ, կամ Խալխալ աւանը եւ դաշտը ու խառնում է ճորոխին:

Փետուցուր առ-ը ընդունում է ձախից էյերլի լ-րից իջած ձաղմետ, Դանգլետի եւ Նիցգովանի, Խաչումսար լ-ից Բեդաճոր եւ Ջիրչեմ առներ. աջից՝ Խեճոր եւ Խեիցքար, որոնք բոլորն էլ ոռոգում են համանուն գեղերը, սրանց եայլաները, աւերակ բերդերը, ախոռներն ու մացրաները: «Փետուցուր» չորս-հինգ հազար տարուան անունը, պատմական այս կոչումը, որ պահպանել է ճորոխի այս վտակը, որ ոռոգել է ճորոխի փերին հիմնած մողպետներից մէկի աւանը-Խալխալը, որի անունը հասել է ակկատ-սումմէրների մողպետներին եւ պատէզներին եւ նրանց դրացիներին, աւանդաբար մտել է Աստուածաշնչի դրախտի նկարագրութեան մէջ եւ համարուել է դրախտի չորս գետերից — Փիսովն անունով: Խալխալը երեւի գոյութիւն ունեցել է Չագրոսի լ-ների, Անշանի Ոստանի-Խալխալի ժամանակ Միջագետքի եւ Հերոնների երկրի Կարգարի գուղըթաց, Գիլանի, Ուտիքի, Դարալագետի Խալխալների հետ: Քսենոփոնի, Ստրաբոնի եւ արեւմտեան պատմագիրները նկարագրածն անշուշտ այս գետն է: Կարեւել է եզրակացնել, որ ճորոխի նշանաւոր Ոստանի վտակի անունը շիտթեւ կամ ընդհանրացրել են ամբողջ գետին նրա հազուա-

դէպ այցելուները եւ Փիսովնը գրի անցնելով հասել է մեզ եւ համայն գրականութեան:

Ասորական սեպածեւ արձանագրութիւնները «վերին արեւմտեան ծով, Դախանի եւ Դախի երկիր» ասելով՝ Տայոց երկիրը, Եւքսինեան Պոնտոսն էին հասկանում. բայց այդ արձանագրութիւնները դեռ անորոշ են, չենք ծանրանալու դրանց վրայ: Սակայն այդ արձանագրութիւնների մէջ յիշուած Խալխալը, անկասկած ճորոխի Փետուցուր վտակի ակերում հիմնուած, մինչեւ օրս կանգուն եւ բնակավայր Խալխալը լինելուն տարակոյս չի մնում: Մեր հին պատմագիրները ճորոխի անունը չեն յիշատակում, թէեւ Տայոց աշխարհից, Ուղթիք եւ Կիսկիմ դաւառներէից առաջացած զինուորական, քրմական, նախարարական բազմաթիւ գործիչներին ներբողում ու տարբողում են: Նոյն իսկ ճորոխի 15 մեծամեծ վտակները շուրջը կազմակերպուած ընդարձակ դաւառների մասին որոշ տեղեկութիւն, անուններ, բաժանումներ չէք կարող գտնել: Խորենացին իր սուր գրչի երկու խաղով տալիս է մի նկարագիր «դառնայ (Վաղարշակ) առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց Գիլին եւ ի մառախլուտ տեղիս մայրեացն եւ ի լուռաէտս, հաւասարելով զլեռնայինն եւ զջերմախառն ի բարեխառն եւ ի դուզագեղեցիկ վայելչութեան իւրոյ թագաւորութեան, ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով...», բայց էլ աւելի մանրամասնութիւն զգուշանում է նկարագրել:

Եթէ Տայոց մէջ մի այսպիսի Ոստան չլինէր, այն էլ «Պալխարի ստորոտովն», որի գոյութեան մասին, շատ հաւանական է, Խորենացին անձամբ լու տեղեկ էր, մանաւանդ որ այնտեղի քրիստոնէական տաճարի շինութիւնը, որ հեթանոսականից քրիստոնէականի է վերադարձուած եւ հինգերորդ դարից շատ առաջ է կառուցուած, դժուար թէ Խորենացին այս նկարագրութիւնը տար. ուստի ակներեւ է որ մինչեւ հինգերորդ դարը եւ ապա շարունակաբար Ոստանը իր դերքը պահպանած է եղել:

Պարթեւական այս Ոստանը Գ-րդ դարումն էլ գոյութիւն ունէր, ուր Խորով թագաւորը ձմեռն անցկացնում էր, երբ հիւր ընդունեց Պարսկաստանից փախստական Անակին, իր տոհմակից Պահլաւին: Անակը «եկեալ յանգիման եղեւ թագաւորին Խորս-

վու յՈւ(դ)տի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի ի ձմեռոցս արքայութեան Հայոց»։ (Ագաթ. Բ. էջ 29, տպ. Թիֆլիս 1882 թ.)։ Անշուշտ այս Խաղխաղը Ուտի գաւառում էր, այլ Ուղթի (Օլթի), որտեղ դնտում էին Պարթեւ-Պահլաւների կալուածները։ Բացի Ագաթ. մեր պատմաբաններից ոչ ոք չէ յշատակում, թէ Պարթեւները Ուտիում կալուածք ունեցել են։ Ուտին իր յատուկ նախարարն ունէր եւ ոչ մի իշխան իր ձմեռոցը չէր շինել օտարի սեփական հողի վրայ։ Մանաւանդ Ուտիի Խաղխաղը, Նուխիի արեւմտեան կողմը, Դաղստանին սահմանակից՝ այնքան հեռու է կենդրոնից, որ դժուար թէ Հայոց թագաւորը երկրի կենդրոնից այնքան հեռանար ձմեռելու համար։ Ուտիքի Խաղխաղի շրջակայքին չի նկատում ապարանքների, գղեակների աւերակներ. այն ինչ Փետունջուրի Խաղխաղում կան նախապատմական եւ պատմական շրջանի բազմաթիւ կերտուածքներ եւ կառուցուածքներ, որտեղ թագաւորը իր շքամբով եւ սրանց ընտանիքով կարողացել է ձմեռել։ Խաղխաղը Պարթեւ-Պահլաւների որորանը, սեփականութիւնը լինելուն համոզում կազմելուց յետոյ, պէտք է համոզուել, որ Խաղխաղի շրջակայ, մերձակայ բարեբեր եւ հարուստ երկիրները ամբողջապէս նրանց սեփականութիւնն էր կազմում։ Ուղթիք ու Կիցկա գաւառների մէջ էլ նրանք մեծ կալուածներ ունէին եւ ճորտիս Աւագանի կապուած էին։

Նոյն իսկ Ագաթ.ի հետագայ պարբերութիւնը աւելի զօրացնում է ենթադրութիւնը. Խոսրովն ու Անակը «զամենայն ժամանակս ձմեռայնոյն ուրախութեամբ գաւառս ցրտաշունչս սառնամանեացն անցուցանէին» Խաղխաղում։ Անկասկած Խոսրովը օտար կալուածքում ամբողջ ձմեռը չէր կարող անցնել իր հիւրերի, շքամբի, սրանց ընտանիքների, թիկնապահների, զօրքի եւ բազմաթիւ սպասաւորների հետ եւ միայն դարնան այնտեղից հեռանալ։

Դեռապէս եւ թագաւոր Արշակունին եւ նրա շքամբի բոլոր անդամները առանց իրենց կանանց օտարի յարկի տակ չէին կարող մնալ ամիսներով. Զրազաշտական օրէնք եւ պարտաւորութիւն էր նոյն իսկ պատերազմի դաշտումն էլ կանայք իրենց ամուսինների հետ էին գնում։ Պսկ Հայաստանի թագաւորը, Արշակունի գահակալը ո՛չ մի-

այն օրէնքների դէմ չէր կարող գործել, այլ առանց 2000 հոգով շքամբի՝ տեղից չէր կարող շարժուել։ Ուտիքի-Նուխու Խաղխաղի հեռաւորութիւնը եւ հնութիւնների բացակայութիւններն նկատի առնելով, Սեւանի լճի հիւսիս-արեւելեան լեռներում եւ Ծեղամ առուակի ափին գտան մի ինչ որ Խէյլիխանա գեղ, ենթադրեցին, թէ դա պիտի լինի Խաղխաղը. բայց ո՛չ ոք չձգտեց մօտենալու իսկական Խաղխաղին, ճորտիս Փետունջուր առուակի ափին հիմնուած այն ոստանին, որը մինչեւ օրս կրում է հնութեան անմէն նշանները։

Եթէ Անակի Հայաստան գալու պայմանները հետազօտենք, պիտի համոզուենք, որ Անակը անկասկած Փետունջուրի Խաղխաղն եկաւ, գտաւ տոհմակցին իր վիճած կալուածքում, այն վիճակում, որն իր պապերից ժառանգած սեփականութիւն էր համարում, ուր գտաւ տոհմակցին — Խոսրովին արքայական ձմեռանոցում։ Շատ որոշ է Անակի Հայաստան գալու, իր տոհմակցի Խոսրովին սպաննելու նպատակը։ Թէեւ ժլատ բայց մեզ համոզիչ փաստ է տալիս Ագաթ.ը, որն ասում է՝ թէ Անակը իր ազգակցից, ինչպէս իր թշնամուց ձգտում էր վրէժ լուծել «յիւրմէ ազգէն իբրեւ ի թշնամուց վերայ խոստանայր վրէժ խնդրել»։ Իսկ Արտաշիւրի խօսքերից աւելի պարզում է Անակի դիտաւորութիւնը — «եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ, զբնակութիւնս պարթեւական գձեր սեփական պախլան ի ձեզ դարձուցից, եւ քեզ քաղաքացից, եւ երանելի, եւ փառաւոր ի թագաւորութեան իմում արարից եւ երկրորդ ինձ կոչեցից»։ (Ագաթ. Բ. 29. նոյն։) Խորենացին միեւնոյն բանը կրկնում է. «Եթէ զբուն պատուական գձեր սեփական պախլան, զայն անդրէն ի ձեզ դարձուցից, եւ զքեզ թագաւ փառաւորեցից»։ (Խոր. գիրք Բ. գլ. կե. էջ 206 Թիֆլիս 1910.)։ Այս խօսքերից պարզ է, որ Անակը Հայաստան գնաց Խոսրովին սպաննելու որպէս զի սեփական պահալաւ կալուածքն ստանայ։ Խոսրովը իր տոհմով պիտի ջնջուէր, որպէս զի Արտաշիւրը կարողանար Անակին տալ ո՛չ միայն վիճելի կալուածքը-պահալաւը, այլ եւ թագը (անշուշտ Հայաստանի) եւ իր երկրորդը հրատարակել։ Բայց Խորենացին սոյն պարագան չի կարողանում համառօտ անցնել։ Խո-

րեն. պատմական (հէլլէն եւ հռոմ) աղ-
բիւրներէից զիտէր, որ պարթեւ-արշակունի-
ները Բակորիայից — Բալլս քաղաքից էին,
այդ պատճառով էլ պարթեւ-պահլաւ անու-
անուեցան: Հետեւաբար Անակի եւ Արտա-
շիւրի դաշնաւորութեան Բահլը փոխադրում
է Բակորիայի Բալլս քաղաքը, որպէս զի
պատմական սխալն ուղղէ, Ագաթ.ի մտքերը
հաշտեցնէ արեւմտեան պատմաբանների
գրութեան հետ: Ագաթ. պարզ գրում է,
թէ Անակն իր Ժառանգական կալուածքն էր
պահանջում, Բահլը. բայց ո՞ւր էին այդ
հողերը չի որոշում: Անակն ի՞նչի պիտի
յանձն առնէր արքայասպան անաբեկիչի
դերը, պիտի մտնէր Հայաստան, պիտի
խողխողէր Խոսրովին, եթէ իսկապէս Ժա-
ռանգական կալուածական վէճ չունենար եւ
նրան չխոստանար Արտաշիւրը այդ կալուած-
ների հետ եւս Հայաստանի արքունի գահը:
Եթէ Անակի պահանջը Բակորիայի Բալլս քա-
ղաքն էր, ի՞նչ կապ կար Խոսրովի եւ Բակ-
որիայի մէջ. մի՞թէ Խոսրովը Հայաստան
նստած տիրում էր Բալլսին, կամ Բալլսը նրա
ելչիանութեան տակն էր եւ Արտաշիւրը չէր
կարող այդ կալուածքը Անակին տալ մինչեւ
որ մէջ տեղից չվերանար Խոսրովը:

Շատ պարզ է, որ Խոսրովի նախնիքը,
երբ ստացան Հայաստանի գահն ու թագը,
ի սպառ ձեռք վերցրին Բակորիայից, որն
արքայից-այգայի սեփականութիւնն էր
կազմում: Ինչի՞ պիտի Անակը Հայաստանի
Թագաւորին սպաննէր, որպէս զի կարողա-
նար տիրել Բակորիային: Ինչի՞ Արտաշիւրը
անմիջապէս չէր յանձնում այդ վիճելի կա-
լուածքը Անակին, քանի որ դա իր անմիջա-
կան իշխանութեան տակն էր գտնուում: Անակը
այնպիսի հրէշային գործ կատարելու համար
յուսադրուած էր Պալլսարի Բահլն ու Հայ-
աստանի թագը ձեռք բերելու: Անակը շատ
լաւ գիտէր, որ Սասանեան Արտաշիւրը որ
եւ է կալուածքին կամ Բակորիայի Բալլսին
աչք տնկելը կը վերջանար մի բաժակ օշա-
րակով, որ նրան կը տանէր խաւարի անդուն-
դը: Նա Բահլն ու Հայաստանի թագն էր ու-
զում կորզել Խոսրովից եւ արքայից-ար-
քայի երկրորդ բազմոցը գրաւել Երանեան
աշխարհում: Խորենացին Ագաթանդէոսին
հակասող վիճակից ազատելու համար գրում
է իր Բ. գրքի կը. եւ կթ. գլուխները, առանց
քննելու այն պարագաները, որ քարերն ու

ջրերը լեզու պիտի ելնեն եւ բացարութիւն-
ներ տան Ի-րդ գարում:

Պալլսար վտակն եւ Բահլ առ-ը Խալլսա-
լից միան 30 կիլոմետր հեռաւորութիւն ու-
նին, որոնք մինչեւ օրս Հայ գրականութեան
չատ քիչ են նիւթ տուել: Պալլսար եւ Խալ-
լսալ վտակների աւազանները ինչպէս աչկա-
տարեան, նոյնպէս նախապատմական եւ
պատմական շրջանների կերտուածներով ի-
րար նման եւ իրար հետ կապ ունին: Այս
Պալլսարի եւ Բահլ-Բահլիւրարի մէջ պէտք
է որոնել պահլաւներին, ոչ թէ Բակորիայ-
ում: Այս պարագան աւելի կը պարզուի ձո-
րոսի վտակների ափերին գտնուած աւան-
ների, գեղերի, առուակների, լեռների, ամ-
րոցների եւ աւերակների ուսումնասիրու-
թիւնը կատարելով: Միայն Պալլսար եւ Փե-
տունջուր վտակները չեն, այլ շատ ուրիշ
փաստեր կան, որ լրացնում են պահլաւնե-
րի կալուածքի մանրամասնութիւնները,
տեղն ու դերքը:

Լիվանայի ձորում ձորոսին աջ ափից
ընդունում է Կոլլիկ, Ավարես, Ախալդա,
Սիմիսիկատ, Բաշկարիտ, Ամատան, Զիլ-
գաս, Ինլիսան, Նակաչ, Իթիկ, Սիջիկ, Ար-
կինս, Միսուր, Մորվեա, Տուրմուսալէտ,
էրիլիսան, Բալիէ, Բեծ, Խորան, Բարակետ,
Թոլսնա-Գորա, Կանդա-Գորա, Ոֆդար,
Խերս (Գերս), Պիտոկ, Ալվանի կալա, Խիս-
տաց փոր, Կաօլա-Գորա, Նուստա-Գորա,
Նումատերիա, Աւագան, փոքր Խոդ, մեծ
Խոդ, Գիդրիլիտի, Բակտա, Զախրա-լսան,
Օրջոլս (Որջնհայ) առունները, որոնք ուղղում
են համանուն գեղերը, նրանց հանդերը, այ-
դեատանները, Կայլաներն ու Խիտունները: Իսկ
ձախ ափից Փետունջուրից յետոյ ընդու-
նում է Բիկատ առուակը համանուն գեղից
եւ Մելօ վտակը, որ լինում է Գիդուրէ եւ
Սարիքիլէ լեռներից: Մելօ վտակը ունի բազ-
մաթիւ առուններ եւ առուակներ աջից ու ձա-
մաթիւ որոնք ուղղում են Շաշէ-Գորա, Լա-
խից, որոնք ուղղում են Շաշէ-Գորա, Զատա-
շէ-Գորա, Շակշիար, Շաշն-Գորա, Զատա-
դուրեվ, Գունուսէր, Սասօէլսու, Խիկար,
Մելիքեանցուր եւ Թափուում է Որջոսի մօտ
ձորովը: Այստեղ են կապանները, Տումատ-
կա, Զագրական, Խասքին գեղերը:

Այս ձորը միշտ համարուել է Լիվանայի
ամենավտանգաւոր վայրը, ուր մարդ սպա-
նում են գոնէ մի գոյգ տրեխ ոտքերից հա-
նելու եւ օգտուելու համար: Միանգամայն

ամենաբարեբեր ձորն է, ուր աճում է նուռը, թուզը, մանաւանդ ձիթենին: Այս ձորի ամէն մի անկիւնը անառիկ, անմատչելի է եւ այստեղ են մեր պատմական Որջնիաղ եւ Երախանի (Էրիխանա) գեղ-բերդերը, ուր պարբերաբար ապաստանում էին բռնաւորներից փախստականները:

Ո՛չ Պալխարի, ո՛չ էլ Փետունջուրի ու Մերոյի շրջանում հայի գիւղ կայ. 1578ին ի սպառ կոտորուած են Հայերը, որոնք այս ձորն ապաստանելով՝ միշտ հալածել տանջել էին օսմանեան կառավարիչ փաշաներին եւ միւթի-ղաղիներին: Սակայն աւերակ բերդերի, ամրոցների եւ ազարակների շուրջը աւերակ տաճարները բազմաթիւ են: Այս գաւառներին Պալխար-Սամխալ միացած Համչէնի եւ Սեւ ծովի ափերի՝ Արխաէ, Վիցէ, Արտաշէն նաւահանգիստների եւ ձորի մէջ ապրողները բոլորն էլ հայախօս (ինչպէս իրանք ասում են հայնակ) մահմետականներ են. պահպանել են տոհմական լեզուի հետ սովորոյթ-բարքերը, բայց Սամխալի եւ Պալխարի ժողովուրդը թրքախօս է:

Լեռնակառ: (Շարունակելի):

ԱՏՐՊԵՏ



Մ Ա Տ Ե Ն Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն

ԽՐԱՅԵԱՆ ԿՈՒՐԵՆ, Ժողով-Կէօլծիւկ: Մարտի 1927: 80, էջ 300:

«Ծովք-Կէօլծիւկ»ը երկու մասի բաժնուած է. առաջնոյն մէջ (էջ 13—108) հեղինակը պատմական թուղթիկ ակնարկ մը կը նեակէ Ծովքի վրայ: Կու տայ կարեւոր տեղեկութիւններ նորագոյն Ծովք-Կէօլծիւկի կրած վերջին փոփոխութիւններու մասին: Մասամբ անձնական հետախուզութիւններու եւ մասամբ վերապրող ծովեցիներու տուած տեղեկութիւններու վրայ յեցած՝ կը ներկայացնէ հեղինակը Ծովք-Կէօլծիւկը իր ամբողջ գիւղախումբերովը, հին աւերակներովն ու յիշատակարաններովը: Դժբախտաբար քանի մը սուղ էջեր միայն նուիրուած է ծովեցի Հայոց տարագին, ընտանեկան կեանքին ու աւանդական սովորութիւններուն, որոնց վրայ բաղձալի էր հոս ընթեռնուլ ընդարձակագոյն տեղեկատուութիւններ ու

նկարագրութիւններ, քանի որ կարեւոր ծանօթութիւններ կը պահպին: Կարելի է՞ արդեօք, օրինակի համար, ծովեցիներու ժողովրդական բանահիւտութիւններէն (վիճակի, պարի, վարուցանքի, կարուկուտի եւն, երգերէն) գոնէ քանի մը նմոյշ ներկայացնել: Նոյնպէս հետաքրքական պիտի ըլլար տեղական լեզուէն մէկ երկու ճաշակ ընծայուած տեսնել կա՛մ խօսակցութեան եւ կա՛մ հեքեաթի ձեւի տակ: Յետոյ հեքեաթներ, առածներ, հանելուկներ դժուար չէր թերեւս վերապրող ծովեցի մամիկներէ քաղել ու զետեղել գրքին վերջը: Գուցէ թէ Յարգ. հեղինակը երկրորդ հատորի մը վերապահած է այս կարգի նիւթերու հրատարակութիւնը, ինչ որ ցանկալի է մեզ ենթադրել: Ծովեցիներու տնտեսական կեանքի վրայ (էջ 79—94) տրուած ծանօթութիւնները չափազանց հետաքրքրական ու գոհացուցիչ են:

Գրքին Բ. մասը (էջ 109—300) կը դրողի Ծովքի Հայոց մտաւոր վերադարձնումով ու ազգային կազմակերպութեամբ: Կը խօսուի համաշխարհային պատերազմի ծագումի եւ անոր հայ ժողովուրդի եւ մասնաւորապէս ծովեցուց վրայ ըրած յոռի անդրադարձումին վրայ: Հոս մանրամասնօրէն ու ականատեսի գրչով կը նկարագրուին ծովեցի հայ ժողովուրդի կրած անլուր տառապանքներն ու չարչարանքները՝ նախ քան տեղահանութիւնը եւ յետոյ ամբողջական տեղահանութիւնն ու ընաճնջումը: Սուսուտ կ'ազդէ մարդուն ու աչքերը կը խաւարին, երբ կը կարդայ Հայ ժողովուրդի ընաճնջումի ա՛յնքան հրէշային՝ ա՛յնքան դիւային գործադրութիւնը: Հեղինակը ինքն ալ քամած է հոգեկան ու մարմնական տառապանքի ամբողջ մրուրը: Մխիթարական կէտ մը եթէ կայ գրքին այս տխուր էջերուն մէջ՝ այն ալ պատմութիւնն է քանի մը տասնեակ ծովեցիներու վերապրումին ու դրուագը բուռ մը ծովեցի քաջելու դիւցազնական ինքնապաշտպանութեան, զոր հանդէս կը բերեն Ս. Նշան կղզւոյն վրայ (էջ 193—291):

Կը շնորհաւորենք «Ծովք-Կէօլծիւկ»ի երիտասարդ հեղինակը եւ կը մաղթենք ո՛ր ի մօտոյ լոյս հանէ Ծովքի մասին ուրիշ անդրագոյն տեղեկագրութիւններ ալ, մասնաւորապէս ուշադրութիւն դարձելով անո՛ր ազգաբնակչական նիւթերուն, որոնք, աւա՛ղ, ընդ միշտ կորստեան մատնուելու վտանգի մէջ են:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

